

ՍԳՈՅ "ՌԵԲԼԻԵՄ"՝ ՆՈՒԻՐՈՒԿԾ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՂՆԸ

Posted on August 8, 2015 by Keghart

keghart.com

Category: [Opinions](#)



✖ Վահրամ Աղաջանյան, Ստեփանակերտ, 8 Օգոստոս 2015

"Երրորդ Ուժ Պյուն" փակված թերթի գլխավոր խմբագիր

"Արմենայրես" լրատուական գործակալությունը մի հաղորդագրություն է տարածել, համաձայն որի ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսեանի բարձր հովանու ներքոյ և ԼՂՀ մշակույթի նախարարութեան աջակցութեամբ սեպտեմբերի 1-ին Ստեփանակերտի "Վերածնունդ" կենտրոնական հրապարակում տեղի կ'ունենայ Ջուզեպպե Վերդիի "Ռեքվիեմ"-ի արցախեան պրեմիերան: Այս իրադարձութիւնը նուիրուելու է... Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Անկախութեան Օրուան:



Ճիշտն ասած, հաղորդագրութեան ընթերցումից յետոյ մի պահ թուաց, թէ սա ինչ-որ մէկի անյաջող կատակն է, որ, հաւանաբար, տեղի է ունեցել ինչ-որ թիրիմացութիւն և գործակալութիւնը, երևի, չի համաձայնեցրել այն համապատասխան ատեանների հետ: Քանի որ "ռեքվիեմ" բառը աշխարհի բոլոր բացատրական բառարաններում նշանակում է սգերգ, "կաթոլիկ եկեղեցու լատինական ծեսի հոգեհանգստեան պատարագ": Սկսած բարոկկոյի դարաշրջանից ռեքվիեմը սգոյ օրատորիայի մի տեսակն է՝ սովորաբար նուիրուած ինչ-որ մի ողբերգական իրադարձութեան: "Requiem aeternam dona eis, Domine" ("Հաւերժական խաղաղութիւն շնորհիր նրանց, Տէր") ինտրոիտայի սկզբնաօսքերով բացւում է աւանդական հոգեհանգստի մեսսան, սգոյ պատարագը:

✖ Վահրամ Աղաջանյան, Ստեփանակերտ, 8 Օգոստոս 2015

"Երրորդ Ուժ Պյուն" փակված թերթի գլխավոր խմբագիր

"Արմենայրես" լրատուական գործակալությունը մի հաղորդագրություն է տարածել, համաձայն որի ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսեանի բարձր հովանու ներքոյ և ԼՂՀ մշակույթի նախարարութեան աջակցութեամբ սեպտեմբերի 1-ին Ստեփանակերտի "Վերածնունդ" կենտրոնական հրապարակում տեղի կ'ունենայ Ջուզեպպե Վերդիի "Ռեքվիեմ"-ի արցախեան պրեմիերան: Այս իրադարձութիւնը նուիրուելու է... Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Անկախութեան Օրուան:



Ճիշտն ասած, հաղորդագրութեան ընթերցումից յետոյ մի պահ թուաց, թէ սա ինչ-որ մէկի անյաջող կատակն է, որ, հաւանաբար, տեղի է ունեցել ինչ-որ թիրիմացութիւն և գործակալութիւնը, երևի, չի համաձայնեցրել այն համապատասխան ատեանների հետ: Քանի որ "ռեքվիեմ" բառը աշխարհի բոլոր բացատրական բառարաններում նշանակում է սգերգ, "կաթոլիկ եկեղեցու լատինական ծեսի հոգեհանգստեան պատարագ": Սկսած բարոկկոյի դարաշրջանից ռեքվիեմը սգոյ օրատորիայի մի տեսակն է՝ սովորաբար նուիրուած ինչ-որ մի ողբերգական իրադարձութեան: "Requiem aeternam dona eis, Domine" ("Հաւերժական խաղաղութիւն շնորհիր նրանց, Տէր") ինտրոիտայի սկզբնաօսքերով բացւում է աւանդական հոգեհանգստի մեսսան, սգոյ պատարագը:

Յայտնի է նաև, որ Պետական Անկախութեան Օրը բոլոր ժողովուրդների ու երկրների համար ազգային ամենալուսաւոր ու պայծառ տօնն է: Այն ընդունուած է նշել յատուկ շուքով, հոգևոր

վերելքով, զուարթ, լաւատեսական մթնոլորտում, ժողովրդի լաւագոյն ապագայի նկատմամբ հաւատով, ուրախ երգերով ու պարերով: Ամենուրեք այն տօնում են՝ ոգեւորելով երկրի քաղաքացիներին, այլ ոչ թէ տխրեցնելով նրանց մռայլ ռեքվիեմներով ու հոգեհանգստեան սգերգերով: Թէ ինչո՞ւ են ԼՂՀ անկախութեան հռչակման 24-րդ տարեդարձի կապակցութեամբ ընտրել հենց այս մռայլ ստեղծագործութիւնը, դժուար է ասել: Գուցէ պատճառը միջոցառման նախաձեռնողների անբաւարար տեղեկացուածութիւնն է "Ռեքվիեմ"-ի ստեղծման շարժառիթների մասին, թէ՞ գոյութիւն ունի քաղաքական որոշակի ենթատեքստ ԼՂՀ մայրաքաղաքի կենտրոնում կազմակերպվելիք այս գործողութեան մեջ:

Եւէնք, որ "Ռեքվիեմ"-ի ստեղծման մտայնացումը ծագել է 1868 թ: Յայտնի երգահան Ջուլիանո Ռոսինիի մահը դրդել է Ջուլիանոյի Վերդիին դիմել առաւել յարգուած իտալական կոմպոզիտորներին՝ առաջարկելով նրանց միաւորել ջանքերը գրելու համար երգահանի մահուանը նուիրուած սգոյ պատարագը: Համատեղ աշխատանքն երկարեց ու Վերդին որոշեց գրել սեփական "Ռեքվիեմ"-ը Ռոսինիի վախճանի առթիւ: Գործը շուտափոյթ կերպով աւարտին հասցնելու ազդակ հանդիսացաւ մէկ այլ անձի, այս անգամ յայտնի գրող Ալեսանդրօ Մանձոնիի մահը, որին Վերդին երիտասարդ տարիներից պաշտում էր՝ նրան առաքինութեան իսկական օրինակ համարելով:

Այսինքն այս ստեղծագործութիւնն ամբողջութեամբ կապուած է մի շարք տխուր, ողբերգական իրադարձութիւնների և տարեթուերի հետ: Աւելին. նրա շարժառիթը Ահեղ Դատաստանի թեման է, որը, ինչպէս ասում են, կարմիր թելի նման անցնում է "Ռեքվիեմ"-ի իւրաքանչիւր հատուածով: Եւ ինչպէս պնդում են երաժշտագետները, Վերդիի համար այն սոսկ Դատաստանի օրը չէր խորհրդանշում, այլ հէնց կեանքի քնարական ու նուրբ իդիլիան խախտող ամենագոր ու դաժան մահուան բիրտ ներխուժումը:

Թէ ինչպէս է այս ամենն առնչում ԼՂՀ Անկախութեան օրուա հետ, գիտեն, թերեւս, միայն նրանք, ովքեր ընտրել են իտալացի կոմպոզիտորի հէնց այս ստեղծագործութիւնը: Միգուցէ այս ընտրութեան համար իսթան է ծառայել Ղարաբաղում ստեղծուած սոցիալ-տնտեսական ծանրագոյն իրավիճակը՝ Եթէ այդպէս է, ապա իսկապէս զարմանալ պէտք չէ, քանի որ ղարաբաղեան բիւջէի ներկայիս վիճակը լաւագոյնս նկարագրող ստեղծագործութիւն դժուար է նոյնիսկ պատկերացնել:

Ու ամենահետաքրքիրը. Վերդիի "Ռեքվիեմ"-ի բեմադրութիւնը ԼՂՀ մայրաքաղաքի կենտրոնում կ'իրականացնեն հիմնականում ՌԴ-ից հրաւիրուած արուեստագետներն ու նրանց ղեկավար, ռուսական օպերային երգչուհի Լիւբով Կազարնովսկայան: Հէնց նրանք էլ պէտք է մռայլեցնեն ողջ հայութեան համար այդ պայծառ օրը:

Յուսանք, որ ՀՀ և ԼՂՀ նախագահների մամլոյ ծառայութիւնները կը մեկնաբանեն ստեղծուած իրավիճակը, որն առնուազն տարակուսանք է առաջացնում է արցախցիների շրջանում...

